ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿՆՈՋ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ 19- ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔՈՒՄ

Համաշխարհային գիտափիլիսոփայական միտքը վաղուց ուշադրություն է դարձրել տղամարդու ու կնոջ տարբերությունների, փոխհարաբերության, հասարակական դերակատարման, կոչման հարցերին, փորձել է գտնել այն ուղիները, որոնք կնպաստեն մարդկային կեցության այդ դրսևորումների միջև ներդաշնակության հաստատմանը, կամ պարզապես հիմնավորել է այդպիսի բաժանումների մարդաբանական, պատմական, սոցիալ-քաղաքական, բարոյական, հասարակական անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը: Այսուհանդերձ, պատմականորեն կինը միշտ ստորադասված ու ածանցյալ է եղել տղամարդուց, սահմանափակվել են նրա ազատությունների, հասարակական կյանքի ու գործունեության շրջանակները: Նոր ժամանակներից սկսած, հատկապես լուսավորականության հիմքի վրա, առաջադրվում է կնոջ ազատությունները ընդլայնելու, նրան միջնադարի ու կրոնի պայմանականություններից ազատագրելու, հասարակական ու անձնական կյանքում տղամարդուն հավասար իրավունքներ հատկացնելու, կրթելու ու դաստիարակելու, նրա համար գոյության լիարժեք պայմաններ ստեղծելու պահանջները: 19-րդ դարում, լուսավորական գաղափարախոսության ծավալմանը զուգընթաց, կնոջ ազատագրության ու նրա հասարակական դերի հետ առնչվող հարցերն իրենց անդրադարձն են գտնում նաև հայ իրականության մեջ: Ձևավորվում է կնոջն ավատատիրության ու կրոնի հարկադրանքներից ազատագրելու, նրա վերածնունդն ապահովելու խնդիրը, որին տարբեր մոտեցումներով ու հիմնավորումներով ուշադրություն են դարձրել Խ. Աբովյանը, Մ. Թաղիադյանը, Ս. Նազարյանը, Մ. Նալբանդյանը,

Մ. Սամուրյանը, Գ.Չիլինկիրյանը, Գր. Արծրունին, Գր. Զոհրապը, Ռ. Պերպերյանը և ժամանակի այլ մտածողներ:

Հայ կնոջը նշված վիճակից ազատագրելու ու նրա հասարակական դերակատարումը, իրավունքները ընդլայնելու, գոյության պայմանները ապահովելու մտահոգությամբ՝ հռչակվում է, որ կինը իր հասարակական դրությամբ «կենդանի բողոք» է սեփական ստրկական վիճակի դեմ, և «հասարակությունը չի կարող ազատագրված համարվել», եթե նա ստրկության մեջ է /Արծրունի/, կինը չի քաղաքակրթվի, չի մեծանա նրա ընտանեկան և հասարակական նշանակությունը «քանի որ նա փակված կմնա տան պատերի մեջ» /Ռաֆֆի/, կինը իր իրավունքներով ու ազատության շրջանակներով չի համապատասխանում քրիստոնեության բերած ազատության սկզբունքներին, նա դեռևս մնում է ասիական սովորությունների կաղապարում /Նազարյան/: Չիլինկիրյանը մերժում է Նոր ժամանակների եվրոպական այն մտածողների տեսակետները, ովքեր կնոջ մեջ տեսնում էին արատավոր ու բացասական գծեր, հատկություններ: Նրա քննադատությունը ուղղված է Դիդրոյի դեմ, ում պատկերացմամբ կինը լոկ «պոռնիկ է», Մոնտեսքյոյի դեմ, ում կարծիքով կինը լոկ «հաճելի և փայփայելի արարած» է, Վոլտերի դեմ, ում համար կինը «զերո» է /տե՛ս 1, էջ 123/:

Կնոջ ազատագրության հետ կապված հարցերի ուսումնասիրությունը կատարվում էր տեսակետների, գաղափարական բախումների, բանավեճերի ընթացքում: Կնոջ ազատության, նրա հասարակական դերակատարման համար պայմաններ ստեղծելու չափավոր ազատական սկզբունքի հանգուցակետում կարելի է առանձնացնել երկու հիմնական մոտեցում՝ աջ, ավելի պահպանողականը ու ձախ՝ ավելի արմատականը: Այսպես: Ազգային պահպանողականները կնոջ հիմնախնդիրը քննում են հատկապես ազգային, ընտանեկան ավանդույթների պահպանման մտահոգությամբ: Անհրաժեշտ է համարվում կնոջ լուսավորության ու դաստիարակության հարցը, սակայն քննադատվում ու մերժվում է կնոջը հասարակական - քաղաքական ազատություն տալու պահանջը: Կնոջ ազատությունը համարվում է «ութոպիա», քաղաքացիական ամուսնությունը՝ «պոռնկություն» /այս մասին տե՛ս3, էջ 172-173/:

Նշված մոտեցման հակադրությունն է Ս. Տյուսաբի ձախ արմատական տեսակետը: Նա առաջադրում է ազատ սիրո, կնոջ ու տղամարդու հավասարության գաղափարները, որոնք ջատագովում է հատկապես իր գեղարվեստական երկերում /«Մայտա»,«Սիրանույշ», «Արաքսիա կամ Վարժուհին»/ և հոդվածներում/ տես 2/: Նա նաև կնոջ համար աշխատանքային լայն հնարավորություններ ստեղծելու կողմնակից էր: Գրիգոր Զոհրապը քննադատում է Տյուսաբի այս պահանջները՝ նկատի ունենալով ազգային կյանքի յուրահատկությունը, հայի հոգեբարոյական պատկերացումների բնույթն ու ավանդապահությունը և, հատկապես, կնոջ մարդաբանական՝ կենդանաբանական-կենսաբանական ու հոգեբանական հնարավորությունները: Հիմնական մոտեցումը հանգում է հետևյալին՝ կինը բնականորեն տղամարդու հետ չունի ֆիզիկական, մտավոր, հոգեբարոյական այն հավասարությունը, ինչը պահանջվում է հասարակայնորեն, կնոջ հիմնախնդրի պատմամշակութային չափանիշներով: Ավելին, ըստ Զոհրապի՝ «իգական սեռի իրավանց խնդիրն դեռ մեր մեջ կիզիչ օրվան խնդիր մը չի կրնար համարվիլ», քանզի ազգը իր կյանքով դեռևս պատրաստ չէ այդ վիճակին: Ուստի «Կինն ամուսին և մայր լինելե անդին» մարդկային կյանքի ու հասարակության մեջ այլ պարտականություններ չունի: Եվ ընդհանրապես, «Կինն օտարական է բոլորովին քաղաքակրթության այն հսկա շենքին, որ այր մարդն յուր արյունով , յուր քրտամբը կառուցած է»/ 4, էջ 306 /:

Պերպերյանի պատկերացումները կնոջ մասին հիմնականում համապատասխանում են ժամանակի ընդհանուր ոգուն: Նա հատկապես շեշտը դնում է կնոջ մարդկային, բարոյական, ընդհանուր քաղաքակրթիչ հատկության վրա: Տղամարդու ու կնոջ փոխհարաբերությունը բացատրվում է որպես կյանքի ներդաշնակության ապահովման, հասարակական կյանքի բնականոն զարգացման անհրաժեշտ նախապայման: Հիմնավորվում է կնոջ հասարակական դերակատարման անհրաժեշտությունը: Բանավիճելով Զոհրապի հետ՝ նա իրավացիորեն հակադրվում է նրա այն պնդմանը, թե կինը «օտարական է բոլորովին քաղաքակրթության» շենքի կառուցման գործում: Պերպերյանը գտնում է, որ կինը իր բարոյական, հոգևոր աշխարհով, իր ունակություններով տղամարդուն մղել է դեպի քաղաքակրթական

աշխատանքի: Կինն ու տղամարդն իրենց բոլոր տարբերություններով, միաժամանակ, հավասարակշռում են միմյանց, դրանով իսկ հավասարվում, բայց ոչ թե նույնության, այլ՝ հատկությունների, կարողությունների, ունակությունների համադրման իմաստով /տե՛ս 5, էջ 60-65/: Այսպիսով նա հիմնավորում է նաև կնոջ ինքնությունն ու ինքնատիպությունը, գտնում, որ կինը հասարակության մեջ ունի իր հատուկ դերն ու իրավունքները, որ նրան պետք է արժեքավորել որպես լիարժեք մարդ, անձ, որպես հոգեբարոյական էակ:

Կնոջ ազատությունների, իրավունքների, կնոջ հասարակական դերակատարման մասին հայ մտածողների տեսակետների, ընդհանուր մտահոգության իմաստը, կնոջ հիմնախնդրի պատմաճանաչողական նշանակությունը հասկանալու համար, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքը.

- կինը յուրաքանչյուր հասարակության ու ազգի ընկերային, տնտեսական, քաղաքական կյանքի, հոգեբարոյական իրավիճակի հայելին ու չափանիշն է: Նա անմիջական անդրադարձն է այն ողջ դրականի ու բացասականի, որոնք բնորոշում են գոյություն ունեցող պայմանների էությունը:

- Հայ կնոջ վիճակը 19-րդ դարում ուղիղ համեմատական էր հայ ժողովրդի ծանր կացությանը/ ի դեպ, այդպիսին է վիճակը նաև ներկայումս/: Նշված պատճառով՝ հայ իրականության ու ազգային գաղափարախոսության մեջ տիրապետող էր այն իրատեսական ըմբռնումը, որ հայ կինը դեռևս պատրաստ չէ Եվրոպայում հռչակված ազատություններին: Եվ պատահական չէ, որ հայ կնոջ հնարավոր ազատության ու հասարակության մեջ ունեցած դերի մեծացմամբ մտահոգված Ռաֆֆին նշում է. «Կնոջ *ազատություն,* կնոջ *անկախություն* .... կնոջ *հավասարություն,* դրանք շատ գեղեցիկ բառեր են, բայց դեռ լուսավոր ազգերի մեջ ևս կենսական անվճիռ հարցերի կարգումն են գտնվում ... Եվ ոչ միայն ժողովրդի բարձր դասի մեջ, այլ իջնելով դեպի ցած, նրա բոլոր ծալքերում կինը կարող էր հայտնվել որպես ազդող ոգի, որպես ներգործող ուժ, թե խոշոր և թե մանր բաների մեջ: Ահա դրանում է նրա մեծ հասարակական կոչումը» /6, էջ 158/:

Հայ մտածողները չէին նսեմացնում հայ կնոջ դերն ու նշանակությունը ազգային կյանքում: Նրանց պատկերացմամբ հայուհին ազգային կառույցի

ստեղծման ու պահպանման գործում ունի հսկայական դեր, արժանի է հոգատարության ու հարգանքի և դեռևս շատ հեռու է գոյության ցանկալի վիճակից:

Գրականություն

1. Չիլինկիրյան Գ. Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, 1883:
2. Տյուսաբ Ս. Քանի մը խոսք կանանց անգործության մասին.- Արևելյան մամուլ, 1881, թիվ 9, էջ 344-350:
3. Հովհաննիսյան Ա. Նալբանդյանը և նրա ժամանակը, հ.1, Երևան 1955:
4. Զոհրապ Գ. Մայատա.- Երկրագունտ, 1883, թիվ 10, էջ 305- 310:
5. Պերպերյան Ռ. Մարդիկ և իրք, Կ. Պոլիս, 1885:
6. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան 1991: